



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 11 » փետրվարի 2019թ.

№ 82 -Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՔՆՆՉԱԿԱՆ, ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննչական, հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունների, ինչպես նաև այլ ստորաբաժանումների համագործակցության ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ապահովել սույն հրամանով հաստատված կանոնակարգի կատարման հետ կապված համապատասխան միջոցառումների իրականացումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 2/11/2019 18:53:06 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ



Հավելված

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների

կոմիտեի նախագահի 2019թ. << 11 >> փետրվար ի

N 82 Լ հրամանի

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆՉԱԿԱՆ, ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննչական, հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունների, ինչպես նաև այլ ստորաբաժանումների համագործակցության խնդիրները՝ կապված հարկային և (կամ) մաքսային հանցագործությունների կանխման և կանխարգելման, դրանց ժամանակին բացահայտման, մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու, հարկային և մաքսային հանցագործություններով պետությանը պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ գործառույթների նպատակայնության մեծացման հետ, ինչն իրականացվում է դրանց՝ հարկային և (կամ) մաքսային մարմինների այլ գործառույթների հետ փոխգործության օպտիմալացման նպատակով:

2. Կոմիտեի քննչական վարչության քննիչների կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում կայացված որոշումներով ստուգումները և վերստուգումներն իրականացվում, պետությանը պատճառված վնասի հաշվարկները կատարվում են Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ որոշված ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող ստորաբաժանումների կողմից:

3. Հաշվի առնելով քրեական գործի նախաքննության օրենքով սահմանված սահմանափակ ժամկետները՝ սույն կարգով նշանակված ստուգումները, վերստուգումներն իրականացվում, պետությանը պատճառված վնասի հաշվարկները կատարվում են առաջնահերթ՝ համապատասխան որոշումը ստանալու օրվանից 10 օրյա ժամկետում, ինչն առանձին դեպքերում, համապատասխան հիմնավորմամբ կարող է երկարացվել ևս 20 օրով:

4. Կոմիտեի ստուգում իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) Կատարված ստուգումների արդյունքներով հարկ վճարողներին առաջադրված լրացուցիչ գանձման ենթակա հարկերի, տուրքերի և (կամ) հարկային ու (կամ) մաքսային մարմինների կողմից վերահսկվող այլ պարտադիր վճարների ընդհանուր գումարը, ինչպես նաև հարկային հաշվետվությունները, հաշվարկները կամ հարկման հիմք հանդիսացող այլ տեղեկությունները չներկայացնելու միջոցով չվճարված հարկերի, տուրքերի և (կամ) հարկային ու (կամ) մաքսային մարմինների կողմից վերահսկվող այլ պարտադիր վճարների ընդհանուր գումարը՝ պարտավորությունն առաջադրելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը (չորս միլիոն դրամը) գերազանցելու դեպքերում համապատասխան տեղեկությունները (ստուգման ակտը, արձանագրված իրավախախտումները հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները), ստուգման ակտը ներկայացվելուց և ակտով առաջադրված պարտավորություններն ակտն անբողոքարկելի դառնալուց հետո 10-օրյա ժամկետում չվճարվելուց հետո, ուղարկում են Կոմիտեի իրավաբանական, քննչական, հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժնի աշխատանքները համակարգող Կոմիտեի նախագահի տեղակալին (այսուհետ՝ Կոմիտեի նախագահի տեղակալ)՝ դրանց հետագա ընթացքն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելու համար,

2) Հարկ վճարողի մոտ ստուգում կատարելու անհնարինության դեպքում կազմում են հարկերի, տուրքերի և (կամ) հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ պարտադիր վճարների նախնական հաշվարկ և դրանց ընդհանուր գումարը հաշվարկը կազմելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը (չորս միլիոն դրամը) գերազանցելու դեպքերում համապատասխան տեղեկությունները (նախնական հաշվարկը և դրանում արձանագրված իրավախախտումները հիմնավորող բոլոր

փաստաթղթերի պատճենները) ուղարկում են Կոմիտեի նախագահի տեղակալին՝ դրանց հետագա ընթացքն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելու համար,

3) Կոմիտեի նախագահի տեղակալին են ուղարկում նաև հարկային մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված ուսումնասիրությունների կամ ստուգումների ընթացքում հայտնաբերված՝ կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու կամ իրացնելու, կեղծ գինի, կեղծ օղի կամ ալկոհոլային կեղծ այլ խմիչք պատրաստելու կամ իրացնելու, ակցիզային դրոշմանիշներ կամ հսկիչ նշաններ /դրոշմապիտակներ/ կեղծելու կամ իրացնելու, ակցիզային դրոշմանիշներ, հսկիչ նշաններ /դրոշմապիտակներ/ օտարելու կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով, հսկիչ նշաններով /դրոշմապիտակներով/ ապրանքներ դրոշմավորելու, ակցիզային դրոշմանիշներով, հսկիչ նշաններով /դրոշմապիտակներով/ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելու, ակցիզային դրոշմանիշներով, հսկիչ նշաններով /դրոշմապիտակներով/ դրոշմավորման կանոնները խախտելու վերաբերյալ նախապատրաստված նյութերը, եթե դրանց ընդհանուր արժեքը կամ քանակը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված չափաքանակին, ինչպես նաև մաքսային մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված մաքսային հսկողության կամ ստուգումների ընթացքում հայտնաբերված կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգության, Հայաստանի Հանրապետությունից արտահանված մշակութային արժեքները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չվերադարձնելու, խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների

մաքսանենգության, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության վերաբերյալ նախապատրաստված նյութերը,

4) Կոմիտեի նախագահի տեղակալին են ուղարկում նաև հարկային ու (կամ) մաքսային մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված ուսումնասիրությունների կամ ստուգումների ընթացքում հայտնաբերված՝ այլ իրավախախտումների, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վերաբերյալ տեղեկությունները՝ տվյալ իրավախախտումներին և հանցավոր գործողություններին առնչվող փաստաթղթերի հետ միասին:

5. Կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ուղարկված տեղեկությունների հետագա ընթացքը՝ քրեական հետապնդման հիմքերը պարզելու նպատակով ծանուցում է տնտեսվարող սուբյեկտներին, վերցնում է հայտարարություններ, կատարում է փաստաթղթերի ուսումնասիրություններ և վերլուծություններ, օրենքով սահմանված ժամկետներում նախապատրաստում է նյութեր, նախաքննություն կատարելու համար դրանք ուղարկում Կոմիտեի քննչական վարչություն, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի կարգով նաև այլ նախաքննական մարմիններ:

2) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքներով կազմված նյութերով հարկային ու (կամ) մաքսային մարմնի քննությանն ենթակա Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշների հայտնաբերման դեպքերում նյութերն ուղարկում է Կոմիտեի քննչական վարչություն՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար,

3) Կոմիտեի քննչական վարչության քննիչի հանձնարարությամբ քրեական գործով իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածով սահմանված և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորություններ:

6. Կոմիտեի քննչական վարչությունը՝

1) Կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության, հետաքննողական հսկողության, մաքսանենգության դեմ պայքարի վարչությունների կողմից իրականացված միջոցառումների արդյունքներով նախապատրաստված նյութերով, ինչպես նաև Կոմիտեի այլ ստորաբաժանումներից և քաղաքացիներից ստացված դիմումներով նախապատրաստված նյութերով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության պայմաններում հարուցում է քրեական գործ, բացի այդ Կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունից ստացված նյութերով և այլ նախաքննական մարմիններից ստացված քրեական գործերով օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կատարում է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն,

2) Քրեական գործով կամ նախապատրաստված նյութերով կայացված վերջնական որոշման մասին 5-օրյա ժամկետում հայտնում է Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներին,

3) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով նախապատրաստում է նյութեր, շարունակում է այլ ստորաբաժանումներից և այլ մարմիններից ստացված նյութերի նախապատրաստումը կամ հարուցում է քրեական գործ ու կատարում նախաքննություն՝ մաքսային կամ հարկային իրավահարաբերություններին վերաբերող հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված առարկաների մաքսանենգությունների, Հայաստանի Հանրապետությունից արտահանված մշակութային արժեքները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չվերադարձնելու դեպքերով Կոմիտեի հետաքննողական հսկողության և մաքսանենգության դեմ պայքարի վարչությունների կողմից իրականացված միջոցառումների արդյունքներով նախապատրաստված նյութերով: